ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՈԴՎԱԾ 6. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) իրավասությունն է՝

ա) պետական ծրագրերի մշակումը.

բ) կենդանական աշխարհի պետական հաշվառման կազմակերպումը և իրականացումը.

գ) կենդանական աշխարհի կադաստրի վարումը.

դ) կենդանական աշխարհի մոնիտորինգի կազմակերպումը և իրականացումը.

ե) կենդանիների Կարմիր գրքի վարման կարգի սահմանումը և դրա վարումը.

զ) կենդանական աշխարհի պաշարների օգտագործման պայմանագրեր կնքելը.

է) կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը.

ը) կենդանական պաշարների օգտագործման նորմատիվների հաստատումը.

թ) իր իրավասության սահմաններում միջազգային համագործակցության իրականացումը.

թ1) կենդանական աշխարհի կադաստրի վարման մեթոդական ուղեցույցի հաստատում.

թ2) գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման պայմանագրի և հայտի օրինակելի ձևերի հաստատում.

թ3) Հայաստանի Հանրապետության տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման մասին (սիրողական որս և ձկնորսություն, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) հայտի և պայմանագրի ձևերի հաստատում.

ժ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ: